Դատարանն արձանագրում է, որ որոշման մեջ առկա չէ նշված փաստական հիմքերից որևէ մեկի վկայակոչում, հետևաբար չի կարող լինել նաև գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում:

2. Առաջին պայմանի բացակայությունն ինքնին հանգեցնում է նաև հետագա պայմանների առկայության անհնարինության, քանի որ պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցումն իր հերթին պետք է պայմանավորված լինի առաջին պայմանով սահմանված փաստերից որևէ մեկի առկայությամբ:

3. Որոշումը չի բովանդակում նաև որևէ դրույթ առ այն, որ առկա է եղել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում և Ընկերությունը պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել այն:

ՔԴՕ ՔԴՕ 62-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից և գնահատումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը: Սույն դեպքում նշված փաստի վիճելիության բացասական հետևանքը կրում է Պատասխանողը:

Արդյունքում Դատարանը գտնում է, որ Որոշմամբ սահմանված՝ Ցուցակում ներառման իրավական հիմքը և դրանով պայմանավորված փաստական հիմքերը բացակայում են, Որոշումը չի բովանդակում բավարար տեղեկատվություն իր կողմից փաստագրված արարքի և դրա հետևանքների (պայմանագիր կնքելու իրավունքից զրկում) նկարագրության վերաբերյալ, որի պարագայում Դատարանը առաջնորդվում է որոշմամբ վկայակոչված հիմքի առկայության վերաբերյալ եզրահանգումներով:

<u>6. Դատական ծախսեր և հայցի ապահովում.</u>

ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին, Դատարանը գտնում է, որ հայցը բավարարվելու արդյունքում դատական ծախսը պետք է կրի Պատասխանող կողմը, հետևաբար Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է գանձման պետական տուրքի նախապես վճարված գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

ՎՃՌԵՑ

1. Թիվ ԵԴ2/3595/02/23 քաղաքացիական գործով հայցը բավարարել. անվավեր ճանաչել «Ստարկ Գրուպ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Վարդենիսի համայնքապետարանի 27.03.2023թ.-ի որոշումը:

2. Վարդենիսի համայնքապետարանից հօգուտ «Ստարկ Գրուպ» ՍՊ ընկերության բռնագանձել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարը: Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՄԽԵՅԱՆ**